11. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

11.1. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (ծածկագիր՝ 63-2.2-35)
Մրցույթը կկայանա 20.06.2014թ.՝ ժամը 14[30]-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):

12. ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ

12.1. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (ծածկագիր՝ 67-2.2-50)
Մրցույթը կկայանա 25.06.2014թ.՝ ժամը 14[30]-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):

10.1, 11.1 և 12.1 ենթակետերում նշված մասնագետները կազմակերպում են համապատասխան մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների իրականացումը: Կազմակերպում են զորահավաքային նախապատրաստության մասով պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստման աշխատանքները: Իրականացնում են համապատասխան մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրերի և զորահավաքային պլանների մշակման աշխատանքները, մասնակցում են զորահավաքային պլանների կատարման, ինչպես նաև զորահավաքային ուսումնական վարժանքների կազմակերպման և իրականացման աշխատանքներին: Համագործակցում են հանրապետության զորահավաքային աշխատանքները համակարգող լիազոր մարմնի, պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև այլ մարզերի զորահավաքային մարմինների հետ: Մասնակցում են համապատասխան մարզի զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքման և դրանց կատարման նկատմամբ վերահսկման աշխատանքներին: Իրականացնում են քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման և հետագա ճշգրտման աշխատանքները: Համապատասխան մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին առաջարկություններ են ներկայացնում Մարզպետարանի, Մարզի համայնքների և կազմակերպությունների զորահավաքային նախապատրաստության, ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման և զորահավաքի կազմակերպման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության գծով աշխատանքների համակարգման և վերահսկման վերաբերյալ:

10.1, 11.1 և 12.1 ենթակետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն,

* 10.1, 11.1 և 12.1 ենթակետերում նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 13.2 ենթակետին հաջորդող պարբերությունը),

* 10.1, 11.1 և 12.1 ենթակետերում նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

* ռուսերենի ազատ տիրապետում: